

**ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՄԱՍՆԱ
ԾՈՒԵՐ» ՎԻՊԵՐԳԻ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ***

ՀԱՄԱԻՎ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ամփոփում: Մույն հոդվածում քննվում են «Մասնա ծներ» էպոսի պատումներում առկա բարբառային որոշ իրողություններ: Որպես ուսումնասիրության նյութ՝ վերցրել ենք 1977 թ. Ս. Հարությունյանի կազմած հատորի¹ Մշո բարբառով գրաված չորս պատումների (բանասացներ՝ Տարոնցի Կրպո, Ապարանցի Մուրադ, Ալաշկերտցի Մանուկ Թորոյան, Մարտունեցի Հովհաննես Հակոբյան) և Գ հատորում ընդգրկված՝ Ալաշկերտցի Սեդրակ Աբաջյանի պատումի² բարբառային բառապաշարը: Վիպերգի պատումների բառապաշարը բարբառագիտական ուսումնասիրությունների համար բարբառային նյութերի անսպառ շտեմարան է: Դրանցում արտացոլված է Մշո բարբառի՝ 19-20-րդ դդ. բարբառային համապատկերը, որը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխությունների է ենթարկվել: Ուսումնասիրելով հիշյալ պատումներում առկա բարբառային բառապաշարը՝ առանձնացրել ենք այս բարբառին բնորոշ հնչյունական և ձևաբանական մի շարք յուրահատկություններ: Մշո բարբառը բնութագրվում է բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ հ'-ի առկայությամբ: Դեռ Մ. Աբեղյանն է նկատել, որ բանահավաքները պատում-

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21 T- 6B111 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Տե՛ս **Հարությունյան Ս.**, Մասնա ծներ, Հայ ժողովրդական վեպ, Եր., 1977:

² Տե՛ս Մասնա ծներ, աշխատասիրությամբ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, հ. Գ, Եր., 1979, էջ 183-247:

ները գրի առնելիս «չեն հետևել գիտական ճշտությամբ արտահայտելու բարբառային հնչյուններն ու քերականական ձևերը»¹, ինչն էլ դժվարացնում է դյուցազնավեպի հատկապես բարբառագիտական քննությունը: Շիրակի մարզի Լանջիկ գյուղում գրառած պատումը, սակայն, ունի նաև ձայնագրություն, որում հստակ դրսևորված են Մշո բարբառին բնորոշ շնչեղ ձայնեղները: Բարբառս ունի ո և ե երկբարբառներ, որոնք որոշ չափով փաստված են պատումներում: Մշո բարբառի կարևոր հատկանիշներից է հինհայերենյան հ-ի դիմաց հ կամ իս հնչյուններից մեկի գործառությունը:

Չնարանական հատկանիշներից անդրադարձել ենք Մշո պատումներում գործառող հոգնակերտներին, գրաբարյան գ նախդրով հայցական հոլովին, ի նախդրի՝ տարբեր իմաստներով կիրառությանը, գրաբարյան քարացած հոլովական ձևերին, մի անորոշ հողի և՛ նախադաս, և՛ հետադաս կիրառությանը, ստացականության յուրօրինակ ձևերին, հետադաս մի շարք կապերի նախադաս կիրառությանը և այլն:

Հիմնաբառեր՝ դյուցազնավեպ, պատում, Մշո բարբառ, գրաբար, հնչյուն, բաղաձայնական համակարգ, հոգնակի թիվ, հոլովում, հող, նախդիր

Մուտք

«Սասնա ծռեր» դյուցազնավեպը, որ բանավոր փոխանցվել է հին ժամանակներից, առաջին անգամ գրի է առնվել Գարեգին Սրվանձտյանի կողմից 19-րդ դարի երկրորդ կեսին՝ մշեցի բանասաց Կարապետից: Մանուկ Աբեղյանը Էջմիածնում մոկացի Նահապետից գրի է առնում երկրորդ պատումը: Հետագայում՝ մինչև 19-րդ դարի վերջը, գրառվում և հրատարակվում են Մշո, Մոկաց, Խլաթի, Վանի բարբառներով ու խոսվածքներով պատումներ: 20-րդ դարում գրառվում ու հրատարակվում են նորանոր տարբերակներ՝ արևմտա-

¹ Սասնա ծռեր, հ. Ա, Եր., 1936, էջ Կ – 60:

հայ, մասամբ նաև արևելահայ բարբառներով ու խոսվածքներով, և ամբողջ գրառված ժառանգությունը կազմում է ավելի քան 160 պատում:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպի գրականագիտական, բանահյուսական, առասպելաբանական քննությունից բացի, կարծում ենք, չափազանց կարևոր է նաև դրա լեզվաբանական ուսումնասիրությունը: Վիպերգի պատումների բառապաշարը բարբառագիտական ուսումնասիրությունների համար բարբառային նյութերի արժեքավոր շտեմարան է, մանավանդ որ դրանցում արտացոլված է 19-20-րդ դարերի բարբառային համապատկերը, որը ժամանակի ընթացքում որոշակի փոփոխություններ է կրել:

Այս հոդվածում մեր նպատակն է քննել էպոսի պատումներում առկա բարբառային իրողությունները: Որպես ուսումնասիրության նյութ վերցրել ենք 1977 թ. Սարգիս Հարությունյանի կազմած հատորը, որն «ընդգրկում է վեպի տասը ընտիր պատում՝ գրառված 19-20-րդ դարերում»¹, և Գ հատորում հրատարակված (1979 թ.) Շիրակի մարզի Լանջիկ գյուղում գրանցված պատումը²:

Հարկ է նշել, որ 20-րդ դարի վերջերին բանահավաքչական որոշ աշխատանքներ զուգակցվել են ձայնագրություններով: Լանջիկ գյուղում գրառված պատումը բարեբախտաբար ունի ձայնագրություն, որում բանասաց Սեդրակ Աբաջյանը վիպերգը ներկայացնում է Ալաշկերտի Խաստուր գյուղի խոսվածքով³:

Ըստ Ս. Հարությունյանի՝ պատումներն ընտրելիս հաշվի են առնվել նախ դրանց երկու գլխավոր տիպաբանական խմբերը՝ Մշո և Մոկաց տարբերակները: Այս հատորում գետեղված պատումները ներկայացված են Մշո, Սասնո, Ալաշկերտի, Մոկսի, Գավաշի, Հայոց ձորի բարբառներով ու խոս-

¹ Տե՛ս **Հարությունյան Ս.**, նշվ. աշխ., էջ 5:

² Տե՛ս Սասնա ծռեր, հ. Գ, Եր., 1979, էջ 183-247:

³ <http://serials.flib.sci.am/sasnacrer/test/index.html>

վածքներով: Էպոսի խնդրո առարկա պատումներում առանձնացված Մշո և Մոկաց տիպաբանական խմբերին անհրաժեշտ ենք համարում հավելել նաև Սասնա պատումը, որովհետև բարբառագիտական քննության տեսանկյունից Մուշ-Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբի մեջ հասակորեն առանձնացված են Մուշի և Սասունի բարբառները¹: Քննելու ենք վիպերգում առկա այս երեք տիպերից Մշո բարբառով գրառված չորս պատումների (Տարոնցի Կրպոյի, Ապարանցի Մուրադի, Ալաշկերտցի Մանուկ Թորոյանի, Մարտունեցի Հովհաննես Հակոբյանի) և Գ հատորում ընդգրկված Ալաշկերտցի Սեդրակ Աբաջյանի պատումի բարբառային նյութը՝ դիտարկելով հնչյունական և ձևաբանական որոշ իրողություններ²:

Հնչյունական իրողություններ

Մշո բարբառով գրանցված պատումներում հնչյունական յուրահատկություններից առանձնացրել ենք հետևյալները: Բարբառը բնութագրվում է բաղաձայնական քառաստիճան համակարգով և շնչեղ ձայնեղների, ինչպես նաև ձայնեղ *հ*-ի առկայությամբ: Ցավոք, պատումները գրանցելիս բանահավաքները բարբառագիտական տառադարձամբ չեն գրանցել այս բարբառին բնորոշ շնչեղ ձայնեղները: Ինչպես նշում է Հ. Աճառյանը, Մշո բարբառի *է*, *ո* հնչյուններն ունեն ակնհայտ երկբարբառային արտասանություն, ընդ որում՝ շեշտակիր վանկում, իսկ շեշտից զրկվելով՝ սրանք վերածվում են *է*, *ո* պարզ ձայնավորների³: Բարբառային հնչյունաբանական այս կարևոր հատկանիշը ևս վկայված չէ պատումներում կամ մասամբ է արտահայտված:

¹ Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 134:

² Օրինակները բերվում են բնագրերից, և էջերը նշվում են փակագծերում, անմիջապես նրանց կողքին:

³ Տե՛ս **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտություն, Ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա-Նոր Նախիջեւան, 1911, էջ 116:

Մ. Աբեղյանը «Մասնա ծոեր» վիպերգը քննելիս նկատել է, որ ճիշտ քերականություն կազմելը դժվարանում է նրանով, որ բանահավաքներն առհասարակ գրի առնելու ժամանակ «չեն հետևել գիտական ճշտությամբ արտահայտելու բարբառային հնչյուններն ու քերականական ձևերը»¹, ինչն էլ այսօր դժվարացնում է դյուցագնավեպի հատկապես բարբառագիտական քննությունը:

Շիրակի մարզի Լանջիկ գյուղում գրանցված պատումում, սակայն, որը, ինչպես նշեցինք, ունի նաև ձայնագրություն, բանասաց Սեդրակ Աբաջյանի կենդանի խոսքում շատ պարզորոշ արտացոլված են Մշո բարբառի հնչյունական այն առանձնահատկությունները, որոնք տպագրված պատումներում արձանագրված չեն: Լանջիկ գյուղում կատարված ձայնագրությունում ակնհայտորեն դրսևորված են Մշո բարբառին բնորոշ շնչեղ ձայնեղները, որոնք գործառվում են բառասկզբում գրաբարյան ձայնեղների դիմաց: Օրինակ՝ «Տղեմ՝ էղավ, Բ՛երեցին, անուն դ՛րբեցին Մհեր: Էգեր իմ, օր դ՛ու ընձի ձ՛ի մի տաս: Քու ձ՛իան Բ՛օլոր լավ ձ՛ի ին: Հ՛օդ դ՛րբեց գ՛ըմշու կօղշին, հ՛էլավ, հէձավ: Մէ Բ՛արակ ջ՛ուր մի գ՛իկէր: Խառվան հ՛իրար գ՛իշէր, ջ՛առտեցին: Հ՛ըսօր է ս ձ՛եռով Բ՛ըրդուջ դ՛րէր իմ Մհերի Բ՛էրան, էգեր իմ»² և այլն:

Մշո բարբառում բառասկզբում գործառում է նաև ձայնեղ *հ՛*-ն՝ իբրև ձայնավորով սկսվող բառերում դրսևորվող հավելում: Բարբառախոսաբար Մ. Հարությունյանը ընտիր պատումների հատորը կազմելիս նկատել է այս իրողությունը՝ գրելով. «Այս և հաջորդ մի քանի պատումներում բառասկզբի ձայնավորների առաջ հաճախ ավելանում է ձայնեղ *յ* հազագը (ձայնեղ *հ*), որ բնագրում նշանակված է .յ տառով»³: Եվ խնդրո առարկա գրեթե բոլոր պատումներում առկա է ձայնեղ *հ*-ն, որը լեզվաբանական գրականության մեջ հ՛-ով է տառադարձված

¹ «Մասնա ծոեր», հ. Ա, Եր., 1936, էջ Կ – 60:

² Ձայնագրության հղում: <http://serials.flib.sci.am/sasnacer/test/index.html>

³ **Հարությունյան Մ.**, նշվ. աշխ., էջ 12:

(*հ'ախպուր, հ'իրգուն, հ'ուզրնզներ, հ'իկաք*): Օրինակ՝ *Էդ հ'իրկուն* քնան, սաբախտան *հ'ելան*: Էհ *հ'ինք* խամ տղա էր: Գնաց, ընգավ քեռու *հ'անեչ*: Ու *հ'արձրկեցին* տավար: *Հ'որի* չըս լողկընա (էջ 157, 168, 170, 84):

Լանջիկ գյուղում գրանցված պատումում ակնհայտորեն դրսևորված է *n* և *ե* հնչյունների երկբարբառային արտասանությունը: Պատումի տպագիր տարբերակում կազմողները մասամբ գրանցել են միայն *n* երկբարբառը (պատումում այն նշանակված է երկու կետով *Ք*, սակայն գիտական տառադարձությամբ այն *n*-ով է դրսևորվում): Օրինակ թակավձր, անվձր (անունով), ըդաք, թառըն, տըդոց, ճառ Մանուկ, իրեքչառս, կըդառ մի կարգըդան, նախարադ, աչ, գ'արձ, ծըռոդոդ (հ. Գ, էջ 186, 188, 197, 199) և այլն: Մյուս պատումներում երբեմն ուրոշ օրինակներում սպորդում են *n*-ի երկբարբառային արտասանությամբ օրինակներ (Քառսունից *վուռը* մեկին հավնար: *Վուռըի* պառեկին ձեռ ճխտեց, փոր հասավ, քիսավ գետին, էջ 157): Ե-ի երկբարբառային արտասանությունը գրավոր տարբերակում արտացոլված չէ, իսկ ձայնագրությունում ակնհայտորեն առկա է: Օրինակ՝ տըդեն, դ'ըրեց, հեդ, ձ'եռ, բ'արեվ էնելուն, տըդընէր, ձ'օրէր, մէնք, մեձ թավլէ մի, տըվեց կըտանիմ, բ'երեց, աշեց և այլն¹:

Բարբառային կարևոր հատկանիշներից է հինհայերենյան *h*-ի դիմաց *h* կամ *խ* հնչյուններից մեկի գործառությունը: Հարկ է նշել, որ Մշո բարբառի շրջանակում անգամ այս հատկանիշը տարբերակում է խոսվածքներ: Ուշագրավ է, որ Գ. Ջահուկյանը և Ա. Ղարիբյանը *h*-ի դիմաց *խ*-ի առկայությունը համարել են ենթաշերտային ազդեցության հետևանք²:

Վ. Կատվայանը այս առիթով գրում է. «Հակված ենք ընդունելու, որ բարբառներում *h-խ* համապատասխանությունը

¹ Տե՛ս ձայնագրությունը:

² Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 131: **Ջահուկյան Գ.**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 267:

իրոք գալիս է նախագրային հայերենի շրջանից»¹: Ըստ նրա՝ հնդեվրոպական նախալեզվից տրոհվելու շրջանում հայերենը չէր կարող ներկայանալ իբրև միասնական հնչյունական և քերականական համակարգ ունեցող լեզու, այն պետք է որոշակի ընդհանրություններ ունեցող խոսվածքների խումբ լիներ, որոնք պիտի ունենային իրենց յուրահատկությունները: Դրանցից մեկն էլ որոշ խոսվածքներում հ-ի բացակայությունը և դրա դիմաց խ-ի գործածությունն է եղել: Եվ այս տեսակետը պնդելու համար թերևս կարող է փաստարկ լինել այն, որ հնդեվրոպական լեզուներում գոյություն չունի կայուն և պարտադիր հ-խ հակադրություն՝ ռուսերենը չունի հ, իսկ ֆրանսերենը՝ խ²: Կարելի է ասել, որ Մշո բարբառի շրջանակում այս հատկանիշը տարբերակում է խոսվածքներ. այս բարբառով գրանցված պատումներում երկու տարբերակն էլ արձանագրված է: Հարկ է նշել, որ մեր բարբառագիտական գիտարշավների ընթացքում Շիրակի, Արագածոտնի և Գեղարքունիքի տարածաշրջանի Մշո խոսվածքներում ևս մեզ հանդիպել են թե՛ *h*-ով, թե՛ *h*-ով տարբերակներ³:

Վիպերգի Մշո պատումներում ևս առկա են թե՛ *h*-ով, թե՛ *h*-ով տարբերակները: Այսպես, Մշո առնիստցի բանասաց Կրպոյից, նաև Ապարանցի Մուրադից գրի առած պատումներում *h*-ի դիմաց *h* է գրանցված: Օրինակ՝ Ու կը *հեծնեք* զուր ձին, ու ինչ խղար ջին ու ջանավար եղներ կբոներ, Իդա անգամ մեկ ժուկ ու ժամանակ մնաց, *Հալվորավ* Աբամելիք, Տեսավ օր *զհէրիսէք* զըմէն *հանած* են, դրած ի կալ: Դեղնուտէն թափավ Ասլիմելիքի վըրէն, *հիվընդցավ*: Մանասար *հարցուց* թե՛.- *Հ'օրի* իս *հիվընդցէ*: *Հարցուցին* թե՛.- Թևա-Թորոս *հ'օղ* է: Ըսեցին.- Բերդի *հիմ* թալեց⁴ և այլն: Լանջիկ գյուղում ձայ-

¹ Գատվայան Վ., Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Եր., 2016, էջ 126-127:

² Տե՛ս նույն տեղում, էջ 127:

³ Տե՛ս նաև Գատվայան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Եր., 2018, էջ 36:

⁴ Տե՛ս Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 16, 19, 24, 58, 61:

նագրված և գրի առնված պատումում ևս *h*-ի դիմաց առկա է *h*: Օրինակ՝ *Հ'ելավ* հ'առավոդ էրգու *հաղ* կորեզի *հաց* դրեց ուր *հրբան*, Գանչեց *հոխպոյ*: Օր *հավքըն* վրավով չընցներ (հ. Գ, էջ 191, 226, 230): Մարտունեցի Հովհաննես Հակոբյանից գրի առնված պատումում *h*-ի դիմաց առկա է *խ*: Օրինակ՝ Արդեն *խիւը* քցեր ենք: Էդո կըխատվի *խետն* ու կէթա: *Խացն* ու գինին՝ Տեր կենդանին: Գա մեզի *խացթուխ* էնա: Գնաց *խասավ խոր* երկիր (253, 255, 258, 260): Ի դեպ, բանասացների խոսքում երբեմն գուգահեռաբար գործածվում են և՛ *h*-ով, և՛ *խ*-ով տարբերակները, ինչը թերևս գրական լեզվի ազդեցության մեջ է պայմանավորված կամ էլ գուցե այլ բարբառով լսված պատումների փոխներթափանցումների արդյունք է:

Ձևաբանական իրողություններ

Քննվող պատումներում անդրադարձել ենք առավել ուշագրավ ձևաբանական առանձնահատկություններին: Խնդրո առարկա Մուշի բարբառը պատկանում է արևմտյան խմբակցության կը ճյուղին:

Մշո բարբառը, հայերենի մյուս բարբառների համեմատ, հարուստ է հոգնակերտ մասնիկներով: Մշո բարբառի պատումներում, բացի առավել մեծ հաճախականություն ունեցող *եր*, *ներ* հոգնակերտներից, գործածական են նաև *ք*, *ստան*, *դիք*, *դանք*, *վըդիք*, *անք*, *րանք*, *վանք*, *ունք*, ինչպես նաև բաղադրյալ հոգնակերտները՝ *ան+ք*, *անք+ներ*, *ստան+ք+ներ* (*ձ'իանք*, *ձ'իանքներ*, *հոքեստանքներ*):

Հոգնակի վերջավորությունների գործածությունը բաշխվում է հետևյալ կերպ.

1. Ի, ա ձայնավորով վերջացող բառերը ստանում են *ք*, *ստանք*: Օրինակ Շիրակի մարզի Լանջիկ գյուղում գրանցված պատումում արձանագրված են *ք*, *ստան* հոգնակերտներով հետևյալ բառերը՝ *էրէխէստան*, *էրէխէք*, *խալիֆէստան*, *խարզէստան* (քրոջ կամ եղբոր որդիներ) և այլն: (Պայման կընքեցին՝ Որն օր շուտ մեռնի, էն մեզել էրտա, Ընդոր տան *էրէխէս-*

տանուն տիրություն էն: Էդ մարդ խաբար կըտանէ, Թե՛ Բաղդրդի *խալիֆեստանուն* կըտանէ: Ես,- ըսավ,- իմ քուրճից, իմ *խարգեստաններուց* չըմ .յընցընի: Հ. Գ. էջ, 195, 234, 189): Բանասաց Կրպոյի պատումում՝ ակոէք, ջորեստան, նան՝ ջօրէք (Ու դարձավ, առ *զջորեստան* ու մտավ .յէր, էջ 30, 26):

2. Ազգակցական հարաբերություններ արտահայտող ուրոշ բառերում գործառում են *տիք*, *վըդիք* հոգնակերտները՝ *մանկըտիք*, *կընկըտիք*, *աղջըկըտիք*, *ախպըդիք*, *քուրվըդիք* (էջ 31, 29, 20):

3. Կենդանիների դեպքում դրսևորված են *ն՛ ան*, *ն՛ անք* տարբերակները՝ *ձ՛հան*, *ձ՛հանք*: Օրինակ՝ Քու *ձ՛հան* բոլոր լավ ձ՛ի ին: Յեւան մարդ ու կնիգ հեձան *ձ՛հանք* (հ. Գ, էջ 192, 223):

4. Միավանկ մի շարք բառեր հոգնակին կազմում է *վանք* մասնիկով՝ *իշվանք*, *իձվանք*: Մշո պատումներում գործածվում է նան *վան* հոգնակերտը՝ *հոտըդվան*՝ (*Հոտըդվան* իշկին հ՛իբար հ՛երէս, Մարտունեցի Հ. Հակոբյանի պատում, էջ 302):

5. Որոշ բառերում էլ հոգնակին կազմվում է *դան* (*տան*), *դանք* (*տանք*), *վըդանք* հոգնակերտներով՝ սակոի *գըլխըդան* (սակաոի չափ գլուխներ), *հողբըրտանք*, *աղբըրտանք*, *տիրվըդանք*, *հ՛ընգերդանք*, *կըդորդանք*, *օսկըրդանք*, *ախպըրտան*, *գօմըշտան*, նան *գօմըշտանք*: Էկավ, տեսավ, օր *գօմըշտան* շոքուց գուրանց լեզուն թալեր են դուրս: Դավթի խեղճ էկավ ըդունց վրեն, Արձկեց *գգօմըշտանք* ու տարավ գոլ (Կրպո, էջ 35): Ճիշտ է նկատել Ս. Բաղդասարյան-Թափալցյանը, որ «Մշո բարբառի գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկները, չնչին բացառությամբ, վերջից ունեն *ք*, որպէս ամենատարածված հոգնակերտ, սակայն այդ բոլոր մասնիկները առանց ք-ի էլ հավասար չափով գործածական են. դան-դանք, վան-վանք, ան-անք...»²:

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 188, 46, 45, 80, 86, 34, 35, 278:

² Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Եր., 1958, էջ 75:

Մշո բարբառով գրանցված պատումներում ձևաբանական ուշագրավ իրողություններից առանձնացրել ենք հետևյալները՝

1. Որոշյալ առումով հայցական հոլովը ստանում է *զ* նախդիր, որը գրաբարյան հասկանիշ է և պահպանված է Մշո և Մասնա բարբառներում¹: Օրինակ՝ Քակեց *զակոէք* ու շարեց ի ճակատ: Բերեցին *գտրդէն* խոնդախ երեցին: Արձկեց *զգովշտանք* ու տարավ գոլ: Քշեցի *զհորթերն* ու էկա: Ուր գլուխ ծակեց *զքար*: Կէ՛ հրմկա *զճաշ*, իրկուն գնա՛ *զէղ* ու *զաղ* կէ՛ վրեն (էջ 30, 42, 35, 23, 45, 24): Հարկ է նշել, սակայն, որ Մշո ոչ բոլոր խոսվածքներում է պահպանվել գրաբարյան *զ* նախդիրը. այդպես էլ որոշ պատումներում այն արձանագրված է, մի մասում էլ՝ ոչ: Մարտունեցի Հ. Հակոբյանի պատումում, օրինակ, այն արտացոլված չէ:

2. Մշո պատումներում բացառական հոլովը կազմվում է արևմտյան բարբառներին բնորոշ *է, էն*, ինչպես նաև *ից, ուց* վերջավորություններով: Օրինակ՝ *Ձեռքէն* առեց զթոփուզ ու թալեց, Չունքի գմամ մըր *ազգէն* տարավ, Թորոսի տըղէն *ի փողանէն* ձեն տվեց: Ու էլավ ըտ *տէղէն*, Տեսան, օր մեկ բարակ առու *սարից* գիկա: Մեկ ախչիկ *քաղքից* էղնի, *զէղրանուց* էղնի: *Հ'առավոտվընէ* մինչև ի ճաշին դշեր չէինք կարող արտի վրավից եռացնե: *Բերնէղ* կեթա չոգեք ըմ (շերեփ) թան (էջ 37, 9, 20, 36, 53, 61, 252, 288): Որոշ հատուկ անունների դեպքում բացառականը ձևավորվում է նաև *ու, ա* վերջավորություններով: Օրինակ՝ Դավիթ *Մասունա* հ'էլավ (Դավիթը Մասունից էլավ), Դավիթ օր Մասունա հ'էլավ Քըզի, լառ, քեռի կա *Բիթլիսու* քաղաք (Բիթլիս քաղաքից), Մասնու էկավ, հասավ ի Ծըճմակա քիթ, Ես Մասունայ իմ: Քեռի Թորոս Մասնու զարկեց, Ու գնաց ի Մըսըր: Դավիթ լէ Մսրա էլավ-շիտակ էկավ ի Մասուն (էջ 193, 155, 34, 98, 21, 34): Հարկ է նշել, որ հատուկ անունների բացառականի *ա* վերջավորությո-

¹ Տե՛ս Պետոյան Վ., Մասունի բարբառը, Եր., 1954, էջ 34-35:

յունը գրաբարյան բացառականից առաջացած ձև է՝ *ի Սասունայ*։ *ի*-ն ընկել է ու դարձել *Սասունա*։

3. Մշո բարբառի հոլովական համակարգում բացակայում է ներգոյական հոլովը. հոլովական այդ իմաստը արտահայտվել է սեռական հոլով + մէջ կապով (արբնի մէջ, հորու մէջ, էջ 187, 97), իսկ ավելի հաճախադեպ է *մըջ* նախադրություն + տրական հոլով կազմությունը (մըջ էրին, մըջ պըղընձին, մըջ կորեկին, մըջ քարին, էջ 68, 70)։ Երբեմն հայցական հոլովով դրսևորվում է ներգոյականի իմաստ (Նստած մի առանձին *սենյակ* կերըխում ա կենին։ Մալեր կը չըքվին *տիչ*, կը պաղին,- էջ 299, 168)։

4. Հիշյալ բարբառում ամենատարածվածը *ու* հոլովումն է, այնուհետև՝ *ի*-ն։ Այստեղ գործածական են նաև *վա*, *ան*, *ոջ*, *ա*, *ն*, *ց* հոլովումները (մեծ գեղան ջրի, Տոսպան բլուր, Խըլաթա, Սասունա իշխաններ Շ'երուսաղեմա վըրեն, Մարաթուկա բակ, իրգվա դէն, քուրոջ և այլն (էջ 51, 47, 29, 64, 273, 277)։ Ուշագրավ է, որ Մշո բարբառում պահպանվել են գրաբարյան քարացած հոլովական ձևեր, որոնք արձանագրված են նաև վիպերգի պատումներում։ Օրինակ՝ *աչիչ* (աչքի), *ձեռաց* տակ, *վոտաց* կամ *օտաց* (Օր գընաց *.յոդաց* ճանապարհի, Բ'երեցին թալեցին ցանց), *ավուր* (Չորս ավուր մէջ լման գրառասուն ավահիք շինեցին երկու աղբեր։ Միեր օր զավուր ջոջըցավ), կը նստին վըր ըդ *ական*, կերթաք, կը մըղնիք *կոց* տուն։ *Կնկտոց* կըսեր (էջ 169, 68, 86, 11, 15, 44, 59, 151, հ. Գ, էջ 233)։ Ինչպես տեսնում ենք, Մշո պատումներում *աչք* բառի սեռականը՝ *աչիչ*-ը, նույն գրաբարյան *աչից* ձևն է, պարզապես առնմանության օրենքով *ց*-ն դարձել է *չ*¹։

5. Դերանունների բնորոշ է բացառականի *է* հոլովակերտը (*Քըզնէ* ջոկ մագար ընձի քեռի՝ կա։ Ես լէ *քըզնէ* սովրիմ ու տամ, Ըսին. – Ջանըմ, առ քու խաղեն, *մըզնէ* հեռըցի։ Գոհանամ *քենէ* երկնի ու երկրի ստեղծող։ Ու էղավ իրնէ ավլադ մի (էջ 69, 155, 59, 18, 16)։

¹ Տե՛ս Մաղաթոյան Զ., Ալաշկերտի խոսվածքը, Եր., 1985, էջ 84-85։

6. Մշո բարբառում ընդհանրապես գործածական են *ը, ն* որոշիչ հոդերը, իսկ բարբառի Ալաշկերտի խոսվածքում որոշիչ միակ հոդը *ն*-ն է: Վիպերգի պատումներում այս հատկանիշը երբեմն դրսևորվում է, երբեմն՝ ոչ, իսկ *ը* որոշիչ հոդը գրեթե չի գործածվում: Օրինակ՝ Լուսն օր բացվավ: Ու թակավոր հարցուց: Սանասարն հարցուց: Մհեր օր զավուր ջոջըցավ (էջ 52, 54, 59): Ալաշկերտցի Ս. Աբաջյանի և Մարտունեցի Հ. Հակոբյանի պատումներում երբեմն *ը*-ի գործածության դեպքեր փաստված են, բայց հազվադեպ. ըստ երևույթին, դա գրական լեզվի ազդեցության հետևանք է (Արմաղանը շատ խօսօտ կեղնի, Մերը էդ խրադ տվեց տըղեգներուն: Հ. Գ, էջ 185, 187): Մշո պատումներում հանդիպում են նաև կրկնակի հոդառության դեպքեր, երբ ձայնավորով ավարտվող բառը միաժամանակ ստանում է և՛ *ն*, և՛ *ը* հոդ: Օրինակ՝ *Ձինը* խեծավ, *ձինը* կապեց: Էկավ, *ձինը* տարավ կապեց (Մարտունեցի Հակոբյանի պատում, էջ 259, 258, 263): Բերեց *մարենը* բամբակ (Ս. Աբաջյանի պատում, էջ 211):

7. Անորոշ *մը, մէ* հոդերը գործառում են ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս, նաև որոշ պատումներում կրկնակի անորոշ հոդի կիրառության դեպքեր են վկայված, որը ևս բնորոշ է բարբառներին: Օրինակ՝ Ախպե՛ր, *մե* ախճիգ *ըմ* կորի՛ լավ է: Քան թե *մի* երգիր *մի* քարուքանդ եղնի: Բերեց. Ժամանագ *մը* հ՛ընցավ (Ալաշկերտցի Ս. Աբաջյան, էջ 186): Ընձի *տըղե մ՛* ունենք, բերեցի, մորթինք, կերանք: Օր *ճանգ մի* կորեկ իմ ախպոր հախից կտրիք: Քուր տեսավ, օր *մեկ չաղր մի* ուրանց չաղրի կուշտ զարկուկ էր (Ապարանցի Մուրադ՝ 54, 69, 75): Ժամանակագրորեն հին պատումներում անորոշ հոդը ավելի շատ հետադաս կիրառություն ունի: Օրինակ՝ Դավիթ գտավ աղեկ *բազե մի*, Գաղզվանու Ամիրին *աղջիկ մի* կա (Կրպո, էջ 27, 33):

8. Մշո բարբառն ունի ստացականության յուրօրինակ ձև, որը, սակայն, ոչ բոլոր խոսվածքներում է առկա: Մուշի

պատումներում ստացականությունը դրսևորվում է *u, η (տ)* հոդերով, որոնց վրա ավելանում է *h* թարմատարը: Օրինակ՝ Ինչ կեղնի տա'ս, առնիմ *վըրեսի* (ինձ վրա): Իրեք դիր իմ աստու անուն չիդեր, *գլուխտի* (քո գլուխը) կըկըդրիմ: Քաշէ՛ ձ'իսի (իմ ձին), էրտամ (հ. Գ, էջ 237, 232, 193): Թանգուտին ընկեր ա էրկիր, *հացներսի* (մեր հացերը) խլսեր ա: Որտի՛, խոսք է, *բերնեսի* (իմ բերանից) գացեր ա: Մեկ լե շիրիդ բի *հետոյի* (քեզ հետ): Բավականի խոշուն լե *հետսի* (ինձ հետ) տանիմ, օր ձին բռնեմ, բերիմ (Ապարանցի Մուրադ՝ 51, 56, 97, 98):

9. Քննվող բարբառի յուրահատկություններից է նաև *է* շաղկապի դրափոխությամբ *լէ* (նաև՝ *լը*) տարբերակի գործածությունը, որն առկա է նաև խնդրո առարկա պատումներում: Օրինակ՝ Դավիթ *լէ* Մըսրա էլավ, շիտակ էկավ ի Մասուն: Հեղ ըմ *լէ*, օր հըմալ էղավ: Ընդոնք *լէ* ըսին: Ու տերտեր մի *լէ* հետ վերցու, գա: Ախչիկ *լէ* պսակեց Սանասարի վըրեն: Է՛, քեռի, էդ *լը* լազաթ չունի: Մենք չգինանք, դու *լը* չըսիս: Եդ *լը* շերեփով լցեց (էջ 34, 41, 37, 57, 61, 160, 161, 173):

10. Դյուցազնավետի Մշո որոշ պատումներում անձնական դերանունները հայցական հոլովում *զ* նախդիր են ստանում. սա ևս այս բարբառի յուրահատկություններից է: Օրինակ՝ Մըսրամելիքն իգա, տանի *զմեր* ճժեր: Էլի *զիմ* պապու գուրզն ու քեմալ տո'ւր ընձի: *Ըզըրզի* կենիմ ընձի քավոր: Ու գացե'ք, *զձըր* բերդ շինեք: Գայ օր *զիս* չըք մոռցեր ի: Ու էլավ, *զուր* աղջիկ տվեց: *Զինք* լե վերևանց թալեց ցած, մեռավ (Կրպո, էջ 23, 28, 26, 36, 14, 15, Ապարանցի Մուրադ, էջ 90):

11. Մշո բարբառում անկանոն *գալ, լալ, տալ* միավանկ բայերի վրա ավելանում է *h* նախահավելվածը՝ *իկալ, իլալ, ինալ*: Այս հատկանիշը ևս քննվող պատումներում հաճախադեպ է: Օրինակ՝ Ախալեր, յըր է՞ք *իլաս*: Մէ բարագ ջուր մի *զ'իկեր*: Չես թօղի *իկա*, Էդ ի՛նչ *կիտաք* ընձի: Դու մեր աղի տղեն իս, Էկեր իս քըզի փեշքեշ *կիտանք*: Աստված՝ օր *իտեր* մըզի, Մըր պապու քոշկ ու սարեն *կիտեր* (էջ 69, 72, 12):

12. Կապերի մի մասը, որոնք ժամանակակից հայերենում հանդես են գալիս բացառապես որպես հետադրություններ, Մշո բարբառում կարող են գործածվել և՛ նախադաս, և՛ հետադաս: Մշո բարբառով գրառած պատումներում որոշ կապեր ավելի հաճախադեպ կիրառվում են որպես նախադրություններ: Ինչպես գիտենք, գրական հայերենի հետադաս կապերի մի մասը գրաբարում նախադրություններ են եղել (յետ, յետոյ, առաջի, ի մեջ, ի վերայ և այլն)¹: Կարելի է ասել՝ այս հանգամանքով պայմանավորված՝ գրաբարյան նախադրությունները պահպանվել են սույն բարբառում, ինչը չափազանց լավ է արտացոլված Մշո պատումներում: Օրինակ՝ Կը նստին *վըր* ըդ ական, Զտղեն թողեց ի Գաղզվան *մոտ* ուր մեծ պապ ու ճոչիկ, *մըչ* տըլին, *վըր* ճամփուն էր, *վըր* պառեկին, *վըր* ուրանց հիման (Կրպո, էջ 11, 42, 43, 40, 14): Քար *վըր* քարին, սուն *վըր* սան, էրեցին Սասուն (Ալաշկերտցի Ս. Աբաջյան, էջ 204): Էն լե մարդ ճամբեց *առաջ* ուրանց: Ու ջաղչի քար տվին *դեմ* ուրանց, լցեց *մըչ* պղնձին, Աստված խըտ քըզի էղնի, Հարիր մի վըր իրար պագեց (Ապարանցի Մուրադ, էջ 62, 68, 86, 83):

13. Մշո բարբառով գրառված պատումներում կարևորագույն հատկանիշ է գրաբարյան *ի* նախդրի կիրառությունը: Նկատելի է, որ 19-րդ դարի վերջերին գրանցված պատումներում *ի* նախդրով կազմությունները գերիշխող են, իսկ 20-րդ դարում գրի առնվածների մեջ գրեթե բացակայում են: Ինչպես նկատում է Վ. Առաքելյանը, գրաբարում *ի* նախդիրը ամենից առաջ բացառականի նախդիրն է: Այն նաև եզակի տրական և հոգնակի հայցական խնդիրներով արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ, ներգոյականի *ի* նախդիրը երբեմն կարող է գործիականի իմաստ արտահայտել, *ի* նախդիրը նաև տեղի պարագայի նշանակությամբ է կիրառվում. *ի* նախդիրն այս նշանակությամբ ունի նաև «դեպի» իմաստը և այլն²:

¹ Տե՛ս Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 261-263:

² Տե՛ս Առաքելյան Վ., Գրաբարի քերականություն, Եր., 2010, էջ 205-206:

Ի նախդիրը, ինչպես գրաբարում, այնպես էլ պատումներում տարբեր իմաստներով է գործառվում: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

1. «Դեպի» իմաստով՝ էլավ, իրեք տղեն վերցուց ու գնաց *ի Մըսրըր*: Հանդէ *ի գաւխո՞ւ*՝ Ջորկա տուն: Էկավ օր տի գեր *ի Մարայթուկ*, Դավթի վրեն: Աշողն էլ էլավ գնաց *ի Մասուն*: Ու գացին *ի Ղարս*: Ու դարձավ էկավ *ի որմիկ* (Կրպո, էջ 29, 33, 26, Ապարանցի Մուրադ, էջ 63, 61):

2. Ներգոյականի իմաստ՝ Գիներ խըյ Դավիթն *ի Մասուն* էր: Ձեռք մտուց *ի ծոցք*: Հանած են դրած *ի կալ*: Չտղեն թողեց *ի Գաղգվան* մոտ ուր մեծ պապ ու ճոչիկ, Ու զընի դրած է *ի ներս* (Կրպո, էջ 33, 43, 24, 42, 46):

3. Նպատակի իմաստով՝ Չարկեց, էկավ *ի կոհի*: Մեր Խոլբաշին գացեր Մասուն *ի բան*, Մուղալ էգներ բերե լըծան, զկարմիր կովեր բերե կթան (43, 29):

4. Տեղի իմաստով՝ Դավիթ զկոպալ օգնցուց *ի դուռ*: Քակեց զակոեք ու շարեց *ի ճակատ*: Չարկեց *ի պատ*, արուն թալեց քթեն: Էկավ օր տի գեր *ի Մարայթուկ*, Դավթի վրեն, Մասնու էկավ, հասավ ի Ծըմմակա քիթ: Օր բոռաց, ձեն գնաց *ի Մասուն*, Ուր ճոչ բոթ քիսավ *ի ջարդու քար*, կրակ էլավ մոտեն: Թալեր էր *ի գետին* ու քներ էր, Դավիթ քաշեց խալխան *ի գլուխ* (վահանը գլխին): ՉՄհեր մաղազա է շինած ի գետնի տակ: Օտքեր *ի գետին* կը ճըկվի: Իմ Խանդուղի բոյ՝ ինչ օր ծառն *ի չինարին*, ինչ օր խնձոր ծերն *ի ծառին*: Յոթ գազ ի գետին տարավ զՄսրամելիք (Կրպո, էջ 30, 38, 29, 34, 22, 11, 32, 47, 44, 46, 33, Ս. Աբաջյան, հ. Գ, էջ 216): Խնդրո առարկա պատումներից *ի նախորդով* ձևերը արտացոլված են հիմնականում Տարոնցի Կրպոյի «Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումում: Այլ պատումներում ևս *ի նախորի* կիրառության դեպքեր հանդիպում են, սակայն ավելի քիչ և հիմնականում «դեպի» կապի իմաստով: Օրինակ՝ Նախիր քօմեց, քշեց *ի սար*, Ու գացի *ի Ղարս*, Գնաց *ի Մըրըր* (Ապարանցի Մուրադ՝ 66, 61, 63):

Եզրակացություն

Քննելով «Մասնա ծոեր» դյուցազնավեպի՝ Մշո բարբառով գրառված հիշյալ պատումների բարբառային բառապաշարը՝ կարող ենք ասել, որ այն, իսկապես, բարբառագիտական ուսումնասիրությունների համար անսպառ շտեմարան է:

Քննությունը կարևորում ենք նրանով, որ վիպերգի գրանցումները, կատարվելով 100-150 տարի առաջ, պահպանել են տվյալ ժամանակահատվածի Մշո բարբառի բարբառային համապատկերը: Եվ եթե համեմատենք այսօր ՀՀ տարածքում գործառվող Մշո տարբեր խոսվածքների և պատումների բառապաշարները, նրանց քերականական իրողությունները, կտեսնենք, որ բարբառը զգալի փոփոխություններ է կրել:

Ինչ վերաբերում է բարբառի հնչյունական համակարգին, ժամանակի ընթացքում այն բավականին քիչ է փոփոխվել. բաղաձայնական համակարգում պահպանվել են շնչեղ ձայնեղները: *Ռ* և *հ* հնչյունների երկբարբառային արտասանությունը նույնպես ընդհանուր առմամբ կենսունակ է: Բարբառում այսօր էլ առկա են *հ* հնչյունի *հ* և *խ* տարբերակները:

Մշո բարբառին բնորոշ ձևաբանական շատ հատկանիշներ, սակայն, այսօր կենսունակ չեն: Այսպես՝ գրաբարյան *գ* նախդրով ձևավորված գոյականի որոշյալ հայցական հոլովը և անձնական դերանունների *գ*-ով հայցականը այժմյան Մշո խոսվածքներում գրեթե գործածական չեն: Գրաբարյան *խ* նախդրի կիրառությունը համարյա ամբողջովին դուրս է մղվել Մշո բարբառից, իսկ նախադաս կապերը կիրառությամբ աստիճանաբար զիջում են հետադրություններին:

Գրականություն

1. Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976
2. Առաքելյան Վ., Գրաբարի քերականություն, Երևան, 2010
3. Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն, Ուրուագիծ և դասատրութիւն հայ բարբառների, Մոսկուա- Նոր Նախիջեւան, 1911
4. 4. Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Երևան, 1958
5. Կատվալյան Վ., Բայագետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Երևան, 2016
6. Կատվալյան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր, Գիրք 1, Գեղարքունիքի մարզ, Երևան, 2018
7. Հարությունյան Ս., Սասնա ծռեր, Հայ ժողովրդական վեպ, Երևան, 1977
8. Ղարիբյան Ա., *Հայ բարբառագիտություն*, Երևան, 1953
9. Մադաթյան Զ., Ալաշկերտի խոսվածքը, Երևան, 1985
10. Պետոյան Վ., Սասունի բարբառը, Երևան, 1954
11. Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972
12. Սասնա ծռեր, հ. Ա, Երևան, 1936
13. Սասնա ծռեր, աշխատասիրությամբ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, հ. Գ, Երևան, 1979
14. Չայնագրություն,
<http://serials.flib.sci.am/sasnacrer/test/index.html>

■ АСМИК ХАЧАТРЯН

НЕКОТОРЫЕ ДИАЛЕКТНЫЕ РЕАЛИИ В СКАЗАХ ГЕРОИЧЕСКОГО ЭПОСА ДАВИД САСУНСКИЙ ("САСНА ЦРЕР")

Резюме

В данной статье рассмотрены некоторые диалектные реалии в сказах героического эпоса «Давид Сасунский» («Сасна црер»). В качестве материала для исследования взята диалектная лексика из четырех сказов на диалекте Муша, вошедших в том, составленный в 1977 году С. Арутюняном (сказители: Крпо из Тарона, Мурад из Апарана, Манук Тороян из Алашкерта, Оганес Акопян из Мартуни), а также диалектная лексика сказа Седрака Абаджяна из Алашкерта, включенного в том 3.

Лексический состав сказов в героическом эпосе — неиссякаемый источник материала для диалектологических исследований. В них отражен диалектная панорама Муша 19-20 веков, с течением времени претерпевшая определенные изменения. Изучая диалектную лексику в упомянутых сказах, мы выявили ряд фонетических и морфологических особенностей, характерных для этого диалекта.

Для диалекта Муша характерна четырехуровневая система согласных и наличие придыхательных, звонких согласных, а также звонкого *h'*. Еще М. Абегян заметил, что при записи устного народного творчества фольклористы «не следовали с научной точностью отображению диалектного звучания и грамматических форм», что сегодня затрудняет особенно диалектологический анализ героического эпоса.

Однако в сказе, записанном в селе Ланджик Ширакской области, есть и звукозапись, в которой отчетливо прослушиваются придыхательные и звонкие, характерные для мушского диалекта. В диалекте есть и дифтонги *во* (*n*) и *е* (*jə - t*), которые частично задокументированы в сказах. Одной из важных особенностей мушского диалекта является употребление одного из звуков *h* или *h* (*x*) перед древнеармянским *h*.

Среди морфологических особенностей рассматривалось употребляемое в сказах Муша образование множественного числа – с грабаровским предлогом *q* в винительном падеже, употребление

предлога *h* в разных значениях, грабаровские окаменелые падежные формы, препозитивное и постпозитивное употребление неопределенного артикля, своеобразные формы выражения принадлежности, постпозитивное употребление ряда препозитивных связок и т. д.

Ключевые слова: *героический эпос, сказание, диалект Муша (мушский диалект), грабар, фонема, система согласных (консонантизм), множественное число, склонение, артикль (частица), предлог.*

■ HASMIK KHACHATRYAN

SOME DIALECTAL REALITIES IN "SASNA TSRER" EPIC STORIES

Summary

In this article, we have examined some dialectal realities in the fairy tales of the Sasna Tsrer epic. As a study material, we took the 1977 volume compiled by Sargis Harutyunyan including four stories written in the dialect of Mush (storytellers: Krpo of Taron, Murad of Aparan, Manuk Toroyan of Alashkert, Hovhannes Hakobyan of Martuni) and the dialect vocabulary of the story told by Sedrak Abajyan of Alashkert included in volume C.

The vocabulary of the epic tales is an inexhaustible repository of dialectal material for dialectological studies. They reflect the dialect of Mush of the 19th and 20th centuries which has undergone certain changes over time. Studying the dialect vocabulary in the mentioned stories, we identified a number of phonetic and morphological peculiarities characteristic of this dialect.

The dialect of Mush is characterized by a four-level consonant system including aspirated voiced ones, as well as the voiced *h'*. Still M. Abeghyan noticed that when writing down the stories, the collectors "did not follow the dialectical sounds and grammatical forms of expression with scientific accuracy", which makes the dialectological examination of the epic novel difficult today.

However, the story recorded in the village of Lanjik in the Shirak Region also has a recording in which the aspirated voiced consonant

sounds characteristic of the Mush dialect are clearly demonstrated. This dialect has the diphthongs *n* [vo] and *t* [ye], which are documented to some extent in the stories. One of the important features of the Mush dialect is the occurrence of one of the sounds [h] or [kh] in front of the Old Armenian [h].

Among the morphological features, we have referred to the pluralforms used in Mush stories, the Grabarian accusative case stem with the preposition *q* [z], the use of the preposition *h* [i] with different meanings, the Grabarian 'petrified' forms of declined nouns, the prepositional and postpositional use of the indefinite article *one*, the unique forms of possessiveness, the prepositional use of a series of postpositions, etc:

Key words: *epic, fairy tale, dialect of Mush, grabar (Old Armenian), sound, consonant system, plural, declension, article, preposition*

- **Հասմիկ Ռաֆիկի Խաչատրյան** – Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող: Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի դասախոս: Կատարած ուսումնասիրությունները վերաբերում են հայ բարբառագիտության հիմնախնդիրներին: Հեղինակ է 50-ից ավել հոդվածների և մի քանի մենագրությունների՝ «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում», «Գրական արևմտահայերենի և ՀՀ տարածքում գործառող կը ճյուղի բարբառների առնչությունները», «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր», նյութեր, պրակ 1, Գեղարքունիք (մենագրություն):

Асмик Рафиковна Хачатрян – кандидат филологических наук, доцент, Институт языка имени Р. Ачаряна НАН РА, старший научный сотрудник. Преподаватель Российско - Армянского (РАУ) университета. Проведенные исследования касаются проблем армянской диалектологии. Автор более 50 статей и нескольких монографий: Слова, выражающие родственные

отношения, в диалектах армянского языка. Соотношение литературного западноармянского языка и его разновидности с префиксом «К-», распространенной на территории РА. Диалектная панорама Республики Армения», материалы, том 1, Гегаркуник (монография).

Hasmik Rafik Khachatryan – PhD of Philology, Associate Professor, H. Acharyan Institute of Language of NAS RA, Senior Researcher. Lecturer at the Armenian-Russian (Slavonic) University. The conducted researches concern the problems of the Armenian dialectology. Author of more than 50 articles and several monographs: Words Expressing Kinship Relations in Armenian Dialects. The Correlations between Literary Western Armenian and the Dialects of [k] Branch Used in the RA Territory. Dialectal Overview of the Republic of Armenia”, materials, volume 1, Region of Gegharkunik (monograph).